«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 733-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի _____ «____» N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 733-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 25-ի N 919-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 733-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

ՀՀ կառավարության

2024 թվականի _____-ի N ___-Ն որոշման

«Հավելված

ՀՀ կառավարության

2011 թվականի մայիսի 26-ի N 733-Ն որոշման

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Նոտարական գործողության տեսակը	Նվազագույն աշխատավար նկատմամբ գ (բացառությա գումարի նկա հաշվարկվող
1. Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (փոխանակման, առուվաճառքի, հանձնման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝	5-
2. անշարժ գույքի նվիրատվություն կամ նվիրաբերություն	
ա. առաջին հերթի ժառանգների համար	10-
բ. երկրորդ հերթի ժառանգների համար	15-
գ. այլ անձանց համար	20-
դ. աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար	2
3. Շարժական գույքի օտարման (փոխանակման, առուվաճառքի, հանձնման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝	
1) ավտոտրանսպորտային միջոցների համար	10-
2) այլ շարժական գույքի համար	5-
4. Ռենտայի պայմանագրերը վավերացնելու համար	10-
5. Անշարժ գույքի միավորման կամ բաժանման պայմանագրերը վավերացնելու համար՝	5-
6. Անշարժ գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝	
1) բնակելի տարածության դեպքում՝	

ա. եթե կողմերից մեկը ֆիզիկական անձ է 10-
բ. եթե երկու կողմերն իրավաբանական անձինք են 15-
2) ոչ բնակելի նշանակության շենքի կամ շինության դեպքում՝
ա. եթե կողմերից մեկը ֆիզիկական անձ է 20-
բ. եթե երկու կողմերն իրավաբանական անձինք են 25-

3) այլ անշարժ գույքի դեպքում՝ 5-
7. Շարժական գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար 10-
8. Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերը 15-

վավերացնելու համար
9. Գրավի պայմանագրերը վավերացնելու համար՝
1) շարժական գույքի գրավի դեպքում 15-
2) անշարժ գույքի հիփոթեքի դեպքում 20-
3) իրավունքների գրավի դեպքում 10-
4) կոշտ գրավի դեպքում 15-
5) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի դեպքում 10-
6) գրավի այլ տեսակների դեպքում 6-
10. Երաշխավորության պայմանագրերը վավերացնելու համար 1
11. Փոխառության պայմանագրերը վավերացնելու համար 10-
12. Կառուցապատման իրավունքի պայմանագրերը վավերացնելու համար 15-
13. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրերը վավերացնելու համար՝
1) շարժական գույք 10-
2) անշարժ գույք 20-
14. Նախնական պայմանագրերը վավերացնելու համար 15-
15. Պայմանագրում փոփոխություն և լրացումներ կատարելու, 5-

պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրերը, պայմանագրերը վավերացնելու համար
16. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից 40-

օգտվելու իրավունք ունեցող անձանց և փոխնակ մոր կամ հայտնի դոնորի միջև պայմանագրերը վավերացնելու համար
17. Խառը պայմանագրերի վավերացման համար 20-

18. Այլ գործարքների վավերացման համար 15-
19. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները ներկայացնելու համար՝ 1
20. Ժառանգության իրավունքի վկայագիր տալու համար՝
1) առաջին հերթի ժառանգների համար՝
ա. ժառանգական զանգվածում 1-2 միավոր գույքի դեպքում 10-
բ. ժառանգական զանգվածում 3-7 միավոր գույքի դեպքում 15-
գ. ժառանգական զանգվածում 8-ից ավելի միավոր գույքի դեպքում 20-
2) երկրորդ հերթի ժառանգների համար՝
ա. ժառանգական զանգվածում 1-3 միավոր գույքի դեպքում 15-

բ. ժառանգական զանգվածում 3-7 միավոր գույքի դեպքում	20-
գ. ժառանգական զանգվածում 8-ից ավելի միավոր գույքի դեպքում	20-
3) այլ անձանց համար	20-
21. Բոլոր ժառանգների համաձայնությամբ նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագրերը չեղյալ համարելու համար	10-
22. Կտակակատարի լիազորությունների հավաստման վկայագրեր տալու համար	2-
23. Լիազորագրեր վավերացնելու համար՝	
1) անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր	2-
2) շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների տնօրինման) իրավունքի լիազորագրեր	1-
3) ավտոտրանսպորտային միջոցների տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքի լիազորագրեր	4-
4) գույքային իրավունքների կառավարման լիազորագրեր	2-
5) այլ լիազորագրեր	1-
24. Լիազորագրից հրաժարվելու կամ լիազորագիրը դադարեցնելու մասին դիմում վավերացնելու համար	1-
25. Ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար	20-
26. Փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկությունը վավերացնելու համար	5-
27. Փաստաթղթերի պատճենները և դրանցից քաղվածքները վավերացնելու համար՝	
1) մեկ էջի համար և,	2
2) մեկից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ էջի համար՝	
ա. նոտարական գրասենյակում պատճենահանվելու դեպքում	0.
բ. այլ դեպքերում	1
28. Փաստաթղթերի վրա յուրաքանչյուր ստորագրության իսկությունը վավերացնելու համար	1-
29. Իր կողմից վստահված թարգմանչի ստորագրության իսկությունը վավերացնելու համար	1
30. Քաղաքացիական նախաձեռնության շրջանակներում տեղում ստորագրությունների հավաքմանը միանալու վերաբերյալ հայտարարության վրա եղած ստորագրության իսկությունը վավերացնելու համար	0.
31. Թարգմանչի ստորագրությամբ յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար	1
32. Կտակի վավերացման համար	5-
33. Կտակը վերացնելու մասին դիմումի վավերացման համար	2-
34. Կտակը փոփոխելու կամ լրացնելու մասին դիմումի վավերացման համար	5-
35. Ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տալու համար	4-
36. Քաղաքացու ողջ լինելու փաստը հաստատելու համար	4
37. Քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը հաստատելու համար	4

38. Լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնությունը հաստատելու համար	4
39. Փաստաթղթեր ներկայացնելու ժամանակը հաստատելու համար	2
40. Ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթեր այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններ փոխանցելու համար	5-1
41. Դրամական գումար կամ արժեթղթեր, թանկարժեք մետաղներ, քարեր դեպոզիտ ընդունելու, պահպանելու կամ հանձնելու, բացառությամբ 33.1-ին կետով նախատեսված դեպքի, և վկայագիր տալու համար	դեպոզիտ 1-2 տ
42. Պետական մարմինների և (կամ) պետական հիմնարկների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից դրամական գումար դեպոզիտ փոխանցելու և նոտարի կողմից այն ընդունելու համար՝	դեպոզիտ գ տոկոսը, բա քան 5,000
43. Փաստաթղթեր ի պահ ընդունելու համար (յուրաքանչյուր օրը)	0.5
44. Ապացույցների ապահովման համար՝	
1) նոտարական վավերացմամբ փաստաթուղթ կազմելու համար և,	5-1
2) նոտարի աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար	10-
45. Կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրությունը վավերացնելու համար	10-
46. Անձանց առաջարկությունների հիման վրա և նրանց պահանջով ոչ օրինակելի գործարքների, հաստատման ոչ ենթակա ոչ օրինակելի փաստաթղթերի կամ իրավական այլ փաստաթղթերի պատրաստման և տրամադրման, ինչպես նաև գործարքների վավերացման կամ փաստաթղթերի պատրաստման հետ չկապված իրավական օգնության կամ խորհրդատվության տրամադրման կամ այլ ծառայությունների մատուցման համար՝ ծառայության մատուցման համար անհրաժեշտ յուրաքանչյուր ժամի համար	10-
47. Կատարողական մակագրության թերթ տալու համար	10-
48. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու համար	10-
49. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը հաստատելու համար՝	
1) անձանց ազգակցական հարաբերությունները հաստատելու համար	10-
2) անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու փաստը հաստատելու համար	10-
3) ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցումը հաստատելու համար	10-
4) ժառանգությունն ընդունելու և ժառանգության բացման վայրի փաստի հաստատման համար	10-
5) իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը հաստատելու համար	10-
6) սեփականության իրավունքով գույքի տիրապետումը հաստատելու համար	10-
7) իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստերը հաստատելու համար	10-

»: